ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/8375/02/24

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

18 հոկտեմբերի 2024թ. | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ թիվ «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով հրատապ բաց մրցութի մասին հրավերը և հրավերի տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցը՝ ոչ պակաս քան 4-օրյա աշխատակազմի ուսուցման պահանջի մասով, անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2024թ. հոկտեմբերի 5-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ թիվ «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով հրատապ բաց մրցութի մասին հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 2024թ. հոկտեմբերի 11-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Որոշումը ստանալուց հետո՝ 2024թ. հոկտեմբերի 15-ին, հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան:

Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2024թ. հոկտեմբերի 15-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2024թ. հոկտեմբերի 16-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127

հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2024թ. հոկտեմբերի 5-ին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ թիվ «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80» ծածկագրով հրատապ բաց մրցութի մասին հրավերը և հրավերի տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցը՝ ոչ պակաս քան 4-օրյա աշխատակազմի ուսուցման պահանջի մասով, անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2024թ. հոկտեմբերի 5-ին:
Թիվ ԵԴ2/8375/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. նոյեմբերի 29-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2024.10.18 18:34:57 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am